

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2018թ. հունիսի 26-ի նիստի

(արձ. N8)

1.2017-2018 ուս. տարվա ԱԱՀ նախագահների հաշվետվություններն ընդունել ի գիտություն,

1.1 հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին և թողարկող ամբիոնների վարիչներին 2018-2019 ուս. տարվա ավարտական աշխատանքները կազմակերպելիս նկատի առնել ԱԱՀ նախագահների կողմից արված դիտարկումներն ու առաջարկները,

1.2 Հեռուստատեժիսուրայի ավարտական կուրսի ղեկավար Ռուբեն Գրիգորյանին հայտնել գրավոր շնորհակալություն բարձրակարգ շրջանավարտներ թողարկելու և ավարտական ֆիլմերի պրոֆեսիոնալ մակարդակ ապահովելու համար:

2.Հաստատել և գործողության մեջ դնել «ԵԹԿՊԻ ՊՈԱԿ-ի ներքին կարգապահական կանոնները»:

3. Հաստատել և գործողության մեջ դնել «ԵԹԿՊԻ-ում բենչմարքինգ (առաջավոր փորձի ուսումնասիրություն) իրականացնելու քաղաքականության ընթացակարգը»:

4. Արձանագրել, որ պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է գործող կարգի համաձայն և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

4.1 հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները,

4.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 6-րդ կետի գ) ենթակետի համաձայն Արամայիս Բաբկենի Սարգսյանին ձայների մեծամասնությամբ (29 կողմ, 2 անվավեր) շնորհել պրոֆեսորի գիտական կոչում ԺԷ.00.01. «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈՀ-ին հաստատել Գիտական խորհրդի որոշումը,

4.3 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա ՀՀ գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 5-րդ կետի բ) ենթակետի համաձայն Կարեն Պավելի Ղազարյանին ձայների մեծամասնությամբ (29 կողմ, 1 դեմ, 1 անվավեր) շնորհել դոցենտի գիտական կոչում Թ.00.03 «Գեղագիտություն» մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈՅ-ին հաստատել Գիտական խորհրդի որոշումը:

5. ԵԹԿՊԻ –ի «Հանդես» գիտամեթոդական հոդվածների ժողովածուում ինստիտուտից դուրս աշխատող հեղինակների հոդվածները տպագրել վճարովի հիմունքներով:

Տպագրության համար գանձվող գումարի չափը սահմանել ռեկտորատի որոշմամբ:

5.1 ՀՀ ՄՆ-ից մասնակի ֆինանսական աջակցություն տրամադրվելու պարագայում ս.թ. նոյեմբերի 19-26-ն ընկած ժամանակահատվածում ինստիտուտի բեմը տրամադրել «Այվազյանական փառատոն»-ի անցկացմանը,

5.1.1 հանձնարարել ՈԻՍԹԼ-ի տնօերն Է. Բարսեղյանին նամակով դիմել ՀՀ մշակույթի նախարարությանը «Այվազյանական փառատոն»-ի անցկացման համար ինստիտուտին մասնակի ֆինանսավորում հատկացնելու խնդրանքով:

6. Հավանություն տալ «Դերասանի աշխատանքը կինոխցիկի հետ» թեմայով 1 շաբաթյա վարպետության դասեր վարելու նպատակով Կարինա Ռոմանովային ինստիտուտ հրավիրելու առաջարկին:

Հրավերի կազմակերպման աշխատանքները հանձնարարել ԴՎՌ ամբիոնի վարիչ Ռուբեն Բաբայանին:

6.1 Վարպետաց դասերի կազմակերպման ծրագրերի համար գտնել ֆինանսական աջակիցներ:

7. Ծննդյան 70-ամյակի կապակցությամբ մշակույթի կառավարման ոլորտում երկարամյա արդունավետ աշխատանքի համար ինստիտուտի վարչաֆինանսական գծով պրոռեկտոր Վահան Ջանիբեկի Եղիազարյանին ներկայացնել ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչման,

7.1 խնդրել ՀՀ մշակույթի նախարարությանն ընթացք տալ սահմանված կարգով:

8. Ինստիտուտի դասախոսական և ուսանողական կազմի հետ մեկ տարի անգլերեն լեզվի անվճար դասընթացներ անցկացնելու և ուսանողների ուսման վարձերի վճարմանն օժանդակելու համար ԱՄՆ-ի քաղաքացի Ջիմ Դեյլիին պարգևատրել ինստիտուտի պատվո մեդալով,

8.1 ս.թ ռեկտորատի հունիսի 21-ի և ԳԽ սույն նիստի որոշումներով արձանագրված պարզևատրումները հանձնել սեպտեմբեր ամսին՝ հանդիսավոր պայմաններում:

Գիտքարտուղար

Գ.Հովհաննիսյան